ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՇ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/17

ք. Երևան «3» հունիսի 2019թ.

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը», ի դեմս գործադիր տնօրեն **Աշոտ Կիրակոսյանի**, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ՎԱՆԴ-ԳԱՍՍ» ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **Գառնիկ Ներսիսյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **«ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն համայնքի համար խորքային հորի հորատման»** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 **Պայմանագրով նախատեսված աշխատանքներն սկսվում են Կողմերի միջև կնքվող պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից և կատարման ժամկետը սահմանվում է 75 օր:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին (հավելված 5) և ծավալաթերթին (հավելված 1) համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **30 աշխատանքային օրվա** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **40,980,000 (քառասուն միլիոն ինը հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, որից 6,830,000 (վեց միլիոն ութ հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն** : Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[1].

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

---

[1] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:*

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Հավելված թիվ 1
«3» հունիսի 2019 թ. կնքված
ՀՍ-92-ԱՇՁԲ-2019/17 ծածկագրով պայմանագրի

Ծավալաթերթ-նախահաշիվ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն համայնքի համար խորքային հորի հորատում

ՀՀ	ՀՀ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավորը	Քանակը	Միավորի արժեքը, հազ.դրամ	Ընդհանուր արժեքը, հազ.դրամ
1	2	3	4	5	6	7
1		Խորքային հոր				
1	1.1	Հորատանցքի հորատում ռոտորային եղանակով IV կարգի գրունտներում, D444.5մմ, ուղիղ լվացմամբ կավային լուծույթով	մ	12.00	15.38	184.52
1	1.2	Հորատանցքի հորատում ռոտորային եղանակով IX կարգի գրունտներում, D444.5մմ, ուղիղ լվացմամբ կավային լուծույթով	մ	38.00	116.09	4411.58
1	1.3	Հորատանցքի հորատում ռոտորային եղանակով IX կարգի գրունտներում, D393.7մմ, ուղիղ լվացմամբ կավային լուծույթով	մ	4.00	164.87	659.48
1	1.4	Հորատանցքի հորատում ռոտորային եղանակով VIII կարգի գրունտներում, D393.7մմ, ուղիղ լվացմամբ կավային լուծույթով	մ	51.80	112.17	5810.22
2	1.5	Հորատանցքի հորատում ռոտորային եղանակով V կարգի գրունտներում, D393.7մմ, ուղիղ լվացմամբ կավային լուծույթով	մ	14.20	44.30	629.05
2	1.6	Հորատանցքի հորատում ռոտորային եղանակով VIII կարգի գրունտներում, D393.7մմ, ուղիղ լվացմամբ կավային լուծույթով	մ	14.00	114.06	1596.86
2	1.7	Հորատանցքի հորատում ռոտորային եղանակով V կարգի գրունտներում, D215.9մմ, ուղիղ լվացմամբ կավային լուծույթով	մ	6.00	29.53	177.20
2	1.8	Հորատանցքի ամրակապում Φ324մմ պողպատե խողովակներով (առանց խողովակի արժեքի)	մ	105.00	5.82	610.62
2	1.9	Հորատանցքի ամրակապում Φ219մմ պողպատե խողովակներով (առանց խողովակի արժեքի)	մ	29.00	4.85	140.54
##	1.10	Արտախողովակային տարածության ցեմենտացում, ներառյալ նյութերի արժեքը	սյուն	1.00	544.97	544.97
1	1.11	Արտախողովակային տարածության կավախծուծում	սյուն	1.00	53.93	53.93
##	1.12	Կավ, արժեք, մատակարարում	մ3	0.10	4.64	0.46

1	1.13	Արտախողովակային տարածության մանրակոպիճի լցում, ներառյալ մանրակոպճի արժեքը, մատակարարումը	մ3	1.70	20.37	34.62
##	1.14	Պողպատե խողովակներ Φ324x9մմ ամրակապող, արժեք, մատակարարում	մ	70.00	57.07	3995.20
1	1.15	Քամիչ կլանիչ ТП 12Φ 2В, Φ324x9, արժեք, մատակարարում	մ	35.00	57.07	1997.60
##	1.16	Պողպատե խողովակներ Φ219x6մմ ամրակապող, արժեք, մատակարարում	մ	19.00	19.34	367.39
1	1.17	Քամիչ կլանիչ ТП 8Φ 2В, Φ219x6մմ, արժեք, մատակարարում	մ	10.00	19.34	193.36
##	1.18	Φ17մմ անցքերի գայլիկոնում (1110հատ 1մ ֆիլտրի համար, 1հատի համար ընդունվել է 10 վարկյան)	մարդ/ժամ	139.86	0.17	23.98
1	1.19	Ալմազե գայլիկոն Φ17մմ անցքերի գայլիկոնման համար, արժեք, մատակարարում	հատ	58.33	1.56	90.89
##	1.20	Ցինկապատ լար 2մմ ֆիլտրի փաթաթման համար, արժեք, մատակարարում	տ	0.21	740.11	153.20
1	1.21	Զրհան պողպատե խողովակներ Φ168x7մմ, արժեք, մատակարարում, տեղադրում	մ	80.00	19.76	1580.80
##	1.22	Ամրակապող Φ219մմ խողովակի եռակցում	մ	19.00	0.50	9.57
1	1.23	Ամրակապող Φ324մմ խողովակի եռակցում	մ	70.00	0.66	46.04
##	1.24	Դուր եռագնդավոր Φ444.5մմ, արժեք, մատակարարում	հատ	3.68	711.56	2619.98
1	1.25	Դուր եռագնդավոր Φ393.7մմ, արժեք, մատակարարում	հատ	5.32	630.24	3351.88
##	1.26	Դուր եռագնդավոր 215.9մմ, արժեք, մատակարարում	հատ	0.13	345.62	45.62
1	1.27	Կավ, արժեք, մատակարարում	մ3	36.29	4.67	169.65
##	1.28	Ջուր, արժեք, մատակարարում	մ3	120.73	0.26	31.98
1	1.29	Կցաշուրթ հարթ պողպատե Ду150մմ, արժեք, մատակարարում և տեղադրում	հատ	18.00	15.94	286.90
##	1.30	Խորքային պոմպ ЭЦВ 12-160-100, արժեք, մատակարարում, տեղադրում	լրակ	1.00	1990.53	1990.53
1	1.31	Հորափողի լվացում մաքուր ջրով	օր	1.00	364.74	364.74
1	1.32	Զրի փորձնական արտամղում "էռլիֆտով"	օր	2.00	364.74	729.49
1	1.33	Խցուկ, ուղղորդիչ լապտեր, մոնտաժ	տ	0.03	54.33	1.82
1	1.34	Խցուկ պողպատե 4մմ հաստ. թիթեղից, արժեք, մատակարարում	տ	0.00	661.11	2.31
1	1.35	Ուղղորդիչ լապտեր Φ6մմ Al դասի ամրանից, արժեք, մատակարարում	տ	0.03	536.26	16.09
1	1.36	Շլամահավաքիչ փոսորակի քանդում էքսկավատորով 0.5մ3 կողլիցքով, IV կարգի բնահողերում	մ3	18.67	0.87	16.25

1	1.37	Շլամի բարձում էքսկավատորով ինքնաթափ	մ3	16.97	0.63	10.75
1	1.38	Շլամի տեղափոխում մինչև 1կմ	տ	34.00	0.27	9.08
1	1.39	Շլամահավիքիչ փոսորակի հետլիցք բուլդոզերով	մ3	19.00	0.09	1.76
2		**Խորքային հորի վերգետնյա հիդրոտեխնիկական մաս**				
2	2.1	IV կարգի բնահողերի քանդում էքսկավատորով կողլիցքով, խրամուղու և փոսորակի ստեղծումով	$մ^3$	161.00	0.53	84.75
2	2.2	IV կարգի բնահողերի քանդում ձեռքով կողլիցքով, խրամուղու և փոսորակի ստեղծումով (հատակի լրամշակում)	$մ^3$	6.00	4.30	25.79
2	2.3	Ավազե նախապատրաստական շերտի ստեղծում 10սմ հաստ., ներառյալ ավազի արժեքը, մատակարարումը	$մ^3$	0.30	4.93	1.48
2	2.4	Նախապատրաստական շերտի ստեղծում օգտակար հանույթի փափուկ բնահողերից 10սմ հաստ.	$մ^3$	14.00	1.97	27.61
3	2.5	Հետլիցք ձեռքով օգտակար հանույթի ընտրովի փափուկ բնահողերով, տոփանումով	$մ^3$	45.00	1.02	45.87
3	2.6	Հետլիցք բուլդոզերով տեղափոխումով 5մ օգտակար հանույթի բնահողերով	$մ^3$	108.00	0.06	6.18
3	2.7	Հորի հատակի ստեղծում միաձույլ բետոնից, B12.5, F150 ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	$մ^3$	0.30	44.13	13.24
3	2.8	Պատերի կառուցում միաձույլ բետոնից, B12.5, F150 ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	$մ^3$	1.70	54.75	93.07
3	2.9	Միաձույլ բետոնե հենարան, B12.5 դասի բետոնից, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը և տեղադրումը	$մ^3$	0.70	52.59	36.81
##	2.10	Պողպատե խողովակներ Φ159x4մմ, արժեք, մատակարարում, տեղադրում, փորձարկում	մ	200.00	10.26	2052.11
2	2.11	Պողպատե խողովակներ Φ21.3x2.5մմ, արժեք, մատակարարում, տեղադրում	մ	1.90	1.29	2.44
##	2.12	Պոլիէթիլենային Φ50մմ խողովակ, արժեք, մատակարարում, տեղադրում	մ	0.70	1.10	0.77
2	2.13	Վենտիլ Φ15, 15կ8բ, արժեք, մատակարարում և տեղադրում	հատ	2.00	2.78	5.56
##	2.14	Սողնակ թուջե Φ150մմ, արժեք, մատակարարում և տեղադրում	հատ	2.00	57.51	115.02
2	2.15	Կցաշուրթ հարթ պողպատե Ду150մմ, արժեք, մատակարարում և տեղադրում	հատ	7.00	15.94	111.57
##	2.16	Մանոմետր Ру1.0ՄՊա, արժեք, մատակարարում և տեղադրում	հատ	1.00	7.36	7.36

2	2.17	Պողպատե ձևավոր մասեր- խողովակապտուկ, Φ21.3x2.5մմ, L=0.1մ, անկյունակ, Φ150մմ ծունկ, ամրան, արմունկ, արժեք, մատակարարում, տեղադրում	տ	0.05	1617.29	78.65
2	2.18	Մետաղական կոնստրուկցիաներ -ամրանային սալիկ, անկյունաթերթ, կափարիչ, պատրաստում և տեղադրում	տ	0.12	83.54	9.89
2	2.19	Ամրանային սալիկի թերթավոր պողպատ 50x50x12մմ, արժեք, մատակարարում	տ	0.03	660.65	16.79
##	2.20	Անկյունաթերթ պողպատից 200x200x6մմ, արժեք, մատակարարում	տ	0.00	671.24	2.55
2	2.21	Թիթեղ պողպատից 6մմ հաստ. , արժեք, մատակարարում (կափարիչ)	տ	0.06	671.24	37.46
2	2.22	Անկյունակ պողպատե L5x50x50. , արժեք, մատակարարում (կափարիչ)	մ	4.28	2.57	10.98
2	2.23	Պողպատե քառակուսի խողովակ 20x20x2մմ. , արժեք, մատակարարում (կափարիչ)	մ	6.32	0.71	4.47
2	2.24	Պողպատե ամրան Φ12մմ AIII դասի, արժեք, մատակարարում (կափարիչ)	տ	0.00	412.90	0.40
2	2.25	Պողպատե ամրան Φ12մմ, Φ8մմ AI դասի, արժեք, մատակարարում (կափարիչ)	տ	0.00	536.26	0.10
2	2.26	Ծխնի Φ20մմ, արժեք, մատակարարում և տեղադրում	հատ	4.00	0.97	3.90
2	2.27	Φ159մմ պողպատե խողովակի նորմալ հիդրոմեկուսացում, նյութերի արժեք, մատակարարում	մ	200.00	1.71	341.66
2	2.28	Մետաղական էլեմենտների ներկում երկշերտ ջրակայուն ներկով, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	$մ^2$	3.60	0.75	2.69
3		Ցանկապատ 5x7.5մ				
3	3.1	Նախապատրաստական շերտի ավազի արժեքը, մատակարարումը	$մ^3$	0.20	2.62	0.52
3	3.2	Բնահողում տոփանված խճի արժեքը, մատակարարումը	$մ^3$	1.51	6.30	9.51
3	3.3	Կոպճային շերտի կոպճի արժեքը, մատակարարումը	$մ^3$	3.70	2.34	8.65
3	3.4	Խարամի շերտի խարամի արժեքը, մատակարարումը	$մ^3$	1.80	2.11	3.80
4	3.5	Կանգնակների և ժապավենաձև հիմքերի բետոն B12.5, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	$մ^3$	2.80	41.16	115.26
4	3.6	Նախապատրաստական շերտի բետոն B7.5, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	$մ^3$	0.60	37.35	22.41

4	3.7	Մետաղական ցանկապատի տեղադրում, մինչև 2.2մ, ներառյալ հողային և բետոնային աշխատանքների իրականացումը	մ	25.00	5.11	127.76
4	3.8	Մետաղական դռնակի տեղադրում	հատ	1.00	1.08	1.08
4	3.9	Φ76x2.5մմ պողպատե խողովակներից կանգնակներ, արժեք, մատակարարում	մ	26.40	2.69	71.12
##	3.10	Մետաղական ցանց N50x2.5, արժեք, մատակարարում	մ2	42.00	1.11	46.59
3	3.11	Մետաղական կոնստրուկցիա- ամրան Φ10մմ AI, արժեք, մատակարարում	տ	0.01	541.88	5.96
3	3.12	Պողպատե անկյունակ 40x40x4մմ, արժեք, մատակարարում	մ	11.00	1.65	18.20
3	3.13	Կողպեք ծխնիով, արժեք, մատակարարում	հատ	1.00	6.23	6.23
3	3.14	Մետաղական էլեմենտների ներկում երկշերտ ջրակայուն ներկով, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	$մ^2$	42.00	0.75	31.67
4		**Խորքային հորի էլեկտրամատակարարում**				
4	4.1	III կարգի գրունտի մշակում ձեռքով	$մ^3$	5.40	4.30	23.21
4	4.2	Հետլիցք օգտակար հանույթի II կարգի գրունտով ձեռքով	$մ^3$	5.00	1.02	5.10
4	4.3	Ավելորդ բնահողերի հարթեցում տեղում ձեռքով	$մ^3$	0.40	1.02	0.41
4	4.4	Բետոնե նախապատրաստական շերտ B7.5դասի միաձույլ բետոնից, ներառյալ նյութերի արժեքը,	մ3	0.06	39.91	2.24
5	4.5	Բետոնե հիմք B12.5, F150 դասի միաձույլ բետոնից, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը և տեղադրումը	մ3	0.32	64.97	20.79
5	4.6	Կոմպլեկտ տրանսֆորմատորային ենթակայան արտաքին տեղադրման ԿՏԵ160/10-8Y1, 10/0.4կՎ, 160կՎԱ, ներառյալ՝ 10կՎ-ի մուտքի սարքավորում, ուժային տրանս-տոր ТМ-160/10 10/0.4կՎ, 160կՎԱ, 0.4 կՎի- բաշխիչ սարքավորում, բաժանիչ РЛНДА-10/250 ПРН-10М շարժաբերով, , արժեք, մատակարարում, տեղադրում	լրակ	1.00	2130.43	2130.43
5	4.7	Տրանսֆորմատորի լցում յուղով	հատ	1.00	14.35	14.35
5	4.8	Տրանսֆորմատորային յուղ	լիտր	205.00	1.25	255.53
5	4.9	Ղեկավարման կայան САУ-200, արժեք, մատակարարում, տեղադրում	հատ	1.00	652.27	652.27
##	4.10	Երկսակագնային հաշվիչ 5Ա հոսանքի, արժեք, մատակարարում և տեղադրում	հատ	1.00	84.58	84.58
4	4.11	Մալուխ պղնձե ջիղերով ВПВ-50, արժեք, մատակարարում և տեղադրում	մ	270.00	2.19	589.98
4	4.12	Հաղորդալար ПВ-2x1.5մմ^2, արժեք, մատակարարում, տեղադրում	մ	90.00	0.22	19.47

4	4.13	Պոլիէթիլենային Φ70 խողովակ, արժեք, մատակարարում և մոնտաժ	մ	5.00	1.74	8.68
4	4.14	Շերտավոր պողպատ հողանցման համար, 40x4մմ, արժեք, մատակարարում և տեղադրում	մ	30.00	0.85	25.55
4	4.15	Անկյունավոր պողպատ հիմքի համար, 40x40x4մմ, արժեք, մատակարարում և տեղադրում	տ	0.10	774.58	75.37
4	4.16	10կՎ օդային գծի նախագծման և կառուցման համար նախատեսված գումար "ՀԷՑ" ՓԲԸ-ն	կոմպլ	1.00	991.67	991.67
		Ընդամենը				41468.48
		ԱԱՀ 20%				8293.696
		Ընդամենը՝ ԱԱՀ-ով				49762.18

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն համայնքում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
ՀՎՀՀ՝ 00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Աշոտ Գիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Վանդ-ԳԱՍՍ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Թումանյան 9 շ., բն. 46.
ՀՎՀՀ՝ 09419634
Հ/Հ՝ 1570011766900100
Ամերիաբանկ ՓԲԸ
Տնօրեն
Գառնիկ Ներսիսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«3» հունիսի 2019 թ. կնքված
ՀՄ-ԳՀ-ԱԵՃԲ-2019/17 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
2	«ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ ԽՈՐՔԱՅԻՆ ՀՈՐԻ ՀՈՐԱՏՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	*Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը*	*75-րդ օրացուցային օրը*
		ԸՆԴԱՄԵՆԸ	*75 օրացուցային օր*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Վանդ ԳԱՍՍ» ՍՊԸ

Հասցեն՝ Թումանյան 9 շ. բն. 46
ՀՎՀՀ՝ 09419634
Հ/Հ՝ 1570011766900100
Ամերիաբանկ ՓԲԸ
Տնօրեն
Գառնիկ Ներսիսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«3» հունիսի 2019 թ. կնքված
ՀՄ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/17 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի												
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում								
			մարտ	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45261133/501	արտեզյան ջրերի խորքային հորերի հորատում	40,980,000	40,980,000	40,980,000	40,980,000	40,980,000	40,980,000	40,980,000	40,980,000	**40,980,000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամորտական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՎԱՆԴ ԳԱՍՍ» ՍՊԸ

Հասցեն՝ Թումանյան 9 շ. բն. 46
ՀՎՀՀ՝ 09419634
Հ/Հ՝ 1570011766900100
Ամերիաբանկ ՓԲԸ
Տնօրեն
Գառնիկ Ներսիսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« » հունիսի 2019 թ. կնքված
ՀՄ-ԳՀ-ԱՇՀԲ-2019/17 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » հունիսի 2019 թ. կնքված
ՀՄ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/17 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 6
«3» հունիսի 2019թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/17 ծածկագրով պայմանագրի

Պատվիրատու
Հայաստանի տարածքային զարգացման
հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝ 00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան

Կատարող
«ՎԱՆԴ ԳԱՍՍ» ՍՊԸ
Հասցեն՝ Թումանյան 9 շ. բն. 46
ՀՎՀՀ՝ 09419634
Հ/Հ՝1570011766900100
Ամերիաբանկ ՓԲԸ

ԱԿՏ
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » հունիսի 2019թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն համայնքի համար խորքային հորի հորատում»

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» « *հունիսի* » 2019 թ.
Պայմանագրի համարը՝ ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/17

Սույնով Պատվիրատուն և ՀՀ, Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն համայնքը, մի կողմից և Կատարողը, մյուս կողմից, հիմք ընդունելով թիվ ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/17 պայմանագրի **3.2.3** կետի պահանջները, կազմեցին սույն **ԱԿՏ**-ը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում նախատեսված աշխատանքների կատարման համար Պատվիրատուն, ՀՀ, Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն համայնքի հետ համատեղ, հանձնում են, իսկ Կատարողն ընդունում է կողմերի միջև կնքված պայմանագրին կից *Նախագծով* նախատեսված տարածքը:

Տարածքը հանձնեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Տարածքը ընդունեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 9
ՀՄ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/17-1 ծածկագրով
գնահատման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան «__» հունիսի 2019 թ.**

ՎԱՆՂ-ԳԱՍՍ ՍՊ ընկերությունը, ի դեմս Ընկերության տնօրեն Գառնիկ Ներսիսյանի /անձնագիր AS0623577 տրված 24.05.2019թ. 011-ի կողմից/, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ *ՀՄ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/17-1* ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետև՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը ապառարկող /Վճարող/ Բանկը՝ /այսուհետև՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱԲՌԱ Քրեդիթ Ռեֆորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև /__/____/20__ ** (Ընկերության կողմից կնքվելիք